ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՈՍԿԵՎԱՆ»
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2025 թվականի հունիսի 10-ի

հիմնադիր ժողովի որոշմամբ

Նախագահ՝

Բորիկ Սաֆարյան

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

Օրինակ 1
ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

«27» 06 2025 թ.

Գրանցման համար
211.171.1464878

Հարկ վճարողի հաշվառման համար
01083471

աշխատակից
_____/_____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2025թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

2. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, ապաքաղաքական լինելը, բարեխղճությունը, անդամների շահերի ընդհանրությունը, անդամության կամավորությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

3. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպություն.

հայերեն կրճատ՝ «Ոսկեվան» հայրենակցական միություն ՀԿ.

ռուսերեն լրիվ՝ общественная организация Союз земляков «Воскеван».

ռուսերեն կրճատ՝ ОО Союз земляков «Воскеван».

անգլերեն լրիվ՝ «Voskevan» Compatriot Union non-governmental organization.

անգլերեն կրճատ՝ «Voskevan» Compatriot Union NGO:

5. Կազմակերպության գտնվելու վայրն է ՀՀ, 0069 ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Յան Ռայնիսի փողոց, 46/1 տուն, հեռախոս՝ +374 91 122290, կայք՝ voskevan.am, էլ. հասցե info.voskevan@gmail.com:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

1) աջակցությունը Ոսկեվան գյուղի բնակիչների շահերի պաշտպանությանը, բարեկեցության բարելավմանը և Ոսկեվան գյուղի ենթակառուցվածքների զարգացմանը,

2) Ոսկեվան գյուղի տնտեսական զարգացման, բարեկարգման, զբոսաշրջության, կառավարման, կոմունալ-կենցաղային սպասարկման և այլ ուղղություններով ծրագրերի մշակումն ու իրականացումը.

3) Ոսկեվան գյուղից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների այլ բնակավայրեր մշտական բնակության տեղափոխված անձանց ու նրանց սերունդների (այսուհետ՝ Ոսկեվանցի հայրենակիցներ) ջանքերի և կարողությունների միավորումը Կազմակերպության կանոնադրության 6-րդ կետի 1-ին, 2-րդ և այլ կետերում ամրագրված նպատակների իրագործման համար.

4) Ոսկեվանցի հայրենակիցների համար պայմանների ստեղծումը՝ ծննդավայրի հետ կապը զարգացնելու նպատակով.

Ոսկեվանցի հայրենակիցների և այլ անձանց, կազմակերպությունների, մերարների կողմից հատկացված միջոցների ծախսման ուղղությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումն ու վերահսկողությունը կատարվող աշխատանքների և գումարների ծախսի նկատմամբ.

6) օրենքով չարգելված այլ գործունեություն:

7. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

8. Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ներքոթվարկյալ այն անձը, ով ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակները և ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը՝

1) Ոսկեվանից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների այլ բնակավայրեր մշտական բնակության տեղափոխված անձը.

2) Ոսկեվանից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների այլ բնակավայրեր մշտական բնակության տեղափոխված անձի ամուսինը, զավակները, նրանց սերունդները.

3) Ոսկեվանի մշտական բնակիչները.

4) այլ անձինք՝ որպես պատվավոր անդամ:

10. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ Նախագահին:

11. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է՝

1) Նախագահը՝ սույն Կանոնադրության 9-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերում նշված դեպքերում.

2) Կազմակերպության խորհուրդը, ձայների պարզ մեծամասնությամբ՝ սույն Կանոնադրության 9-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում.

3) Կազմակերպության ընդհանուր ժողովը, ձայների պարզ մեծամասնությամբ՝ սույն Կանոնադրության 9-րդ կետի 4-րդ ենթակետում նշված դեպքում:

12. Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալ Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է Կազմակերպության անդամության մեջ ընդունելու իրավասություն ունեցող մարմնի որոշմամբ՝ ընդունելության համար սահմանված կարգով:

13. Կազմակերպության անդամների համար անդամավճարի չափը և անդամավճարի վճարման կազմակերպման կարգը սահմանում է Կազմակերպության ընդհանուր ժողովը:

14. Կազմակերպության անդամների համար՝

1) անդամավճար սահմանվում է սույն Կանոնադրության 9-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված անձանց համար: Ժողովի որոշմամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ, Կազմակերպության սոցիալապես անապահով վիճակում գտնվող, որոշ անդամների կարող է տրվել անդամավճար չվճարելու արտոնություն.

2) անդամավճարը, սույն Կանոնադրության 9-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված անձինք, վճարում են կամավորության սկզբունքով:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

1) ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում,

2) անձամբ ներկա գտնվել Ժողովին,

3) ցանկացած դեպքում անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից,

4) ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,

5) վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի կամ խորհրդի որոշումների բողոքարկումն իրականացվում է Ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է Ժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով,

6) Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, Կազմակերպության մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,

7) իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:

16. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

1) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

2) բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները.

3) վճարել անդամավճար՝ բացառությամբ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի:

17. Կազմակերպության կանոնադրական պահանջները խախտելու կամ Կազմակերպության կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում Կազմակերպության անդամի նկատմամբ

մակերպության նախագահի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության կամ Կազմակերպության անդամությունից հեռացնելու ձևով:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝

1) Կազմակերպության անդամների ընդհանուր ժողովը՝ Ժողով.

2) Կազմակերպության խորհուրդը՝ Խորհուրդ.

3) Կազմակերպության գործադիր մարմինը՝ Նախագահը:

19. Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

20. Կազմակերպության հերթական ժողովը գումարվում է երեք տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Խորհուրդը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 20 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին:

21. Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է Խորհրդի կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից:

22. Կազմակերպության արտահերթ Ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:

23. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

1) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

2) այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը,

3) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,

4) Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,

5) Կազմակերպության Խորհրդի և Նախագահի ընտրությունն ու փոփոխումը,

6) Կազմակերպության Նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,

7) Կազմակերպության անդամ ընդունելու և անդամությունից հեռացնելու կանոնակարգի սահմանումը.

) Կազմակերպության խորհրդի ընտրությունը, իրավասությունների ու գործունեության ոնակարգի սահմանումը.

9) Կազմակերպության, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, ինմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնների սահմանումը.

10) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,

11) Կազմակերպության ռազմավարության հաստատումը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն,

12) երեք տարին մեկ անգամ գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,

13) խրախուսման միջոցների, կարգի և ձևերի սահմանումը.

14) Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,

15) Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

16) Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,

17) սահմանում է անդամավճարի չափը և գանձման կազմակերպման կարգը,

18) օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

24. Ժողովն իրավազոր է, եթե գումարվել է օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի որոշումներն ընդունվում են Կազմակերպության Ժողովին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները և հաշվետվությունները պահպանվում են 5 տարի:

25. Կազմակերպության խորհուրդն ընտրվում է Ժողովի կողմից՝ երեք տարի ժամկետով և բաղկացած է 13 անդամից: Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

26. Կազմակերպության խորհրդի կազմն ընտրվում է հետևյալ համամասնությամբ՝

1) 4 անձ՝ Ոսկեվան գյուղի բնակիչ հանդիսացող Կազմակերպության անդամներից.

2) 4 անձ՝ Հայաստանի Հանրապետության այլ բնակավայրերում բնակվող Կազմակերպության անդամ Ոսկեվանցի հայրենակիցների ներկայացուցիչներից.

3) 4 անձ՝ օտարերկրյա պետություններում բնակվող Կազմակերպության անդամ Ոսկեվանցի հայրենակիցների ներկայացուցիչներից.

4) 1 անձ՝ Ոսկեվան գյուղի վարչական ղեկավարը՝ գյուղապետը (ի պաշտոնե):

27. Կազմակերպության Խորհուրդը՝

) համաձայնություն է տալիս (հաստատում կամ մերժում) գործադիր մարմնի՝ Նախագահի երեք միլիոն Հայաստանի Հանրապետության դրամից ավելի արժեք ունեցող անկացած տեսակի գույքի, ֆինանսական միջոցների, պայմանագրերի և այլ գործարքների կնքման առաջարկություններին.

2) Կազմավորում է կազմակերպության կառուցվածքային մարմիններ՝ հանձնաժողովներ և այլն.սահմանում իրավասությունները և գործունեության կանոնակարգը.

3) Ժողովին և Նախագահին ներկայացնում է առաջարկություններ՝ Կազմակերպության գործունեության, ռազմավարության և այլ հարցերի ուղղությամբ.

4) համաձայնություն է տալիս Նախագահի կողմից ներկայացված Կազմակերպության հաստիքացուցակին և տարեկան ծախսերի նախահաշվին.

5) իրականացնում է սույն Կանոնադրության 23-րդ կետի 8-րդ կետին համապատասխան՝ Ժողովի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ:

28. Նախագահն ընտրվում է Ժողովի կողմից երեք տարի ժամկետով: Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է: Նախագահը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը և վարում է ժողովի նիստերը:

29. Նախագահի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

30. Նախագահը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝

1) ապահովում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,

2) տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած, բացառությամբ սույն Կանոնադրության 27-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքերի, տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

4) տալիս է լիազորագրեր,

5) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

7) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը՝ Խորհրդի դրական որոշման դեպքում,

8) հաստատում է Կազմակերպության գործադիր մարմնի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը,

9) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

10) հաստատում է Ժողովների գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք երեք տարին մեկ անգամ ներկայացնում է Ժողովի հաստատմանը,

11) իր իրավասության շրջանակներում ընդունում է Կազմակերպության անդամ և հեռացնում Կազմակերպության անդամությունից, սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով :

12) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

31. Նախագահն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

32. Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

33. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

34. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

35. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) Կազմակերպության անդամների ներդրումները,

2) Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

3) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,

4) դրամական մուտքերը պետական բյուջեից,

5) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,

6) հանգանակությունները,

7) Կազմակերպության անդամների վճարումները (անդամավճարները),

8) օրենքով չարգելած այլ միջոցներ:

36. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

37. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:

8. Ժողովը կազմավորում (նշանակում) է լուծարման հանձնաժողով (լուծարող) և ենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: ազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց ետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

39. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրությունը կազմված է 10.06.2025թ. և բաղկացած է 9 էջից: